ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

ՎԱՐԴԱՆ ՋՐՀԱՆՅԱՆ.
«Մեզ համար չկան անորոշություններ, և Սյունիքում շարունակում ենք կատարել ներդրումներ»

02

ԱՐԹՈՒՐ ԱՂԱՅԱՆ. Հավատարիմ «ԶՐՈ ՎՆԱՍ» սկզբունքին.
«ԶՊՄԿ» ՓԲԸ աշխատանքի անվտանգության բաժնի ղեկավար՝ Արթուր Աղայան

02

ԱՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ. «Մենք բաց ենք բոլոր լրատվամիջոցների համար և սիրով կաջակցենք ԶՊՄԿ-ի աշխատանքները լուսաբանողներին»

02

№ 35
ԱՊՐԻԼ, 2023Թ.

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՑ

Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18
matenashar@zcmc.am

ԸՆԹԵՐՑԻՑ՝ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

Տեխնիկական վերազինում՝ ԶՊՄԿ տեխնոլոգիական ավտոպարկում

04

«Մեզ համար չկան անորոշություններ, և Սյունիքում շարունակում ենք կատարել ներդրումներ»

«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի 1-ին տեղակալ Վարդան Ջհանյանը պատասխանել է «Սյունյաց երկրի» հարցերին:

– Պարոն Ջհանյան, լրացել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հիմնադրման 70-ամյակը: Դա, անշուշտ, նշանակալից իրադարձություն է մեր երկրի հանքարդյունաբերության ոլորտում և առաջին հերթին ընկերության այսօրվա ու նախկին աշխատակիցների կյանքում: Այդ կապակցությամբ, անկասկած, Դուք ասելիք կունենաք՝ շնորհավորանքի խոսք:

– 70 տարին՝ անընդմեջ գործող հանքի համար, պատկառելի ժամանակահատված է: Այս ձեռնարկությունը կրել է Հայաստանի տնտեսության առաջընթացի շատ մեծ բեռ, եղել է հանքարդյունաբերության դպրոցը, եղել է աշխատավայր մի քանի սերնդի համար և շարունակում է մնալ Հայաստանի տնտեսության հենասյունը: Շնորհավորում եմ ընկերության բոլոր աշխատակիցներին՝ կոմբինատի հոբելյանական տարեդարձի առթիվ և մաղթում, որ նրանցից յուրաքանչյուրն իրապես գնահատի իր աշխատանքը և գնահատված լինի՝ իր ստեղծած արդյունքին համահունչ:

Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի աշխատակազմի շուրջ 25 %-ը կանայք են, և կանանց մեկամսյակի առիթով ուզում եմ նրանց առանձնահատուկ շնորհավորանք հղել ու հատկապես շեշտել, որ պետք է կոտրենք կարծրատիպերը, թե հանքարդյունաբերությունը ծանր և միայն տղամարդկանց համար նախատեսված աշխատանք է: Մեր շարքերում բազմաթիվ կանայք ամեն օր ապացուցում են, որ ժամանակակից հանքարդյունաբերությունը տեխնոլոգիապես հագեցած, արժանապատիվ, հետաքրքիր և անվտանգ աշխատանք է նաև կանանց համար:

Շնորհավորում եմ և շնորհակալություն հայտնում մեր բոլոր աշխատակիցներին, ովքեր սիրում ու գնահատում են Սյունիքի բնության այս հրաշալի ռեսուրսը և սիրով, պատասխանատվությամբ կատարում իրենց գործը:

– Եվ, իհարկե, ընկերության դերակատարությունը մեր պետական բյուջեի համալրման գործում: Հարցազրույցներից մեկում Դուք նշել եք երկրի պաշտպանունակության ամրապնդման գործում ԶՊՄԿ-ի դերակատարության մասին: Եվ նույնիսկ օրինակ եք բերել՝ 2021-ին պետբյուջեից պաշտպանությանն ուղղված ծախսերը եղել են 319 մլրդ դրամ, որի կեսից ավելին ապահովել է ԶՊՄԿ-ն: Ենթադրում ենք, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինը շարունակում է առաջնահերթ համարել երկրի և, իհարկե, Սյունիքի պաշտպանունակության ամրապնդումը:

– Նախ դիտարկենք այն գործոնները, որոնք հնարավոր են դարձրել այդ ավելացումը՝ ԶՊՄԿ-ի հարկերի առումով: Առաջինը՝ պղնձի, մոլիբդենի գների բարձրացումն է, ինչը սկսվել է նախանցյալ տարի և շարունակվել 2022-ի առաջին կիսամյակում: Երկրորդը՝ «Հարկային օրենսգրքում» պետական տուրքեր կոնցեսիոնատների արտահանման համար՝ սահմանված լրացուցիչ ռոյալթին էր, ինչը նույնպես նպաստել էր աճի դինամիկային: Այդ դրույթը երկարա-

Պետք է ասեմ՝ միշտ չէ, երբ համացանցով կամ որևէ լրատվամիջոցով ներկայացվող խնդիրը համապատասխանում է իրականությանը: Իհարկե, չենք էլ կարող պնդել, թե խնդիրներ չկան, կան, բայց դրանք լուծելի են:

ժամկետ առումով խնդիրներ էր ստեղծում ոլորտի համար, և լավ է, որ փոփոխվեց: Կարճաժամկետ կտրվածքում դա կնպաստի հարկային մուտքերի որոշակի կրճատմանը, բայց ոլորտի կողմից կայուն տնտեսական ներդրման առումով այդ փոփոխությունն անհրաժեշտ էր:
Եվ, անշուշտ, որոշակի վարչարարական բարեփոխումները նույնպես նպաստել են, որ մոտավորապես նույն արդյունահանման պայմաններում հարկային մուտքերը բարելավվեն:
Ինչ վերաբերում է պաշտպանության ոլորտին, ես ընդամենն օրինակ էի բերել, որ մեր վճարած հարկերը համարժեք են պաշտպանությանն ուղղված բյուջեի կեսին, որպեսզի ավելի լավ պատկերացում լինի, թե ինչ ահռելի գումար է: Միևնույն ժամանակ, սա նաև ցույց է տալիս, թե ինչ կարևոր է եղած ռեսուրսները, այդ թվում՝ հանքարդյունաբերության ոլորտի ռեսուրսները ճիշտ օգտագործելը և զարգացած տնտեսություն ունենալը: Առանց զարգացած տնտեսության մենք չենք կարող ունենալ հզոր բանակ, հզոր պետություն: Ես սա առիթ ունեցել եմ ասելու՝ եթե Հայաստանը ԶՊՄԿ-ի հզորության ևս մեկ կամ երկու ծրագիր ունենար, կունենայինք որակապես այլ տնտեսություն:

– 2020 թ. նոյեմբերի 9-ից և մասնավորապես այդ տարվա դեկտեմբերի 18-ից հետո Սյունիքի շուրջ ռազմաքաղաքական նոր իրավիճակ է ստեղծվել: Ավելին, շարունակվում են անորոշությունները մեր տարածաշրջանի շուրջ: Արդյո՞ք ստեղծված վիճակում ռիսկային չեք համարում ընկերությունում կատարվող ներդրումները, արդիականացմանն ուղղված քայլերը:

– Ոչ, մենք դա համարում ենք մեր բնականոն աշխատանքը՝ Հայաստանի ինքնիշխան սահմանների մեջ, և այդ հարցում՝ ներկա իրավիճակում, մեզ համար չկան անորոշություններ: Ընդհակառակը՝ Սյունիքում շարունակում ենք կատարել ներդրումներ և ամեն կերպ նպաստել տարածաշրջանի զարգացմանը: Կոմբինատն արդիականացվում է, և շարունակելու ենք զարգացնել հանքարդյունաբերությունը՝ լավագույն տեխնոլոգիաներ ներգրավելով: Նման գործելաոճն ինքնին, եթե նույնիսկ հաշվի չառնենք արդեն իսկ մեծ օգուտ բերող հարկերը, այս ձեռնարկության զարգացումը դարձնում է մարզի համար կարևոր ռազմավարական գործոն, որն ապահովում է հանրության զբաղվածությունը, ապահովում է ներդրումներ, տնտեսական աճ և դառնում մարզն ամրացնող կարևոր հենասյուն:

– Զանգեզուրի պղնձամոլիբդենայինը հսկայական տնտեսություն է և, բնականաբար, չեն կարող չլինել թերություններ, դժվարություններ, բացթողումներ, որոնք Ձեզ, որպես գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, անհանգստացնում կամ մտահոգում են: Այդ մասին կուզենայինք իմանալ:

– Ինչ խոսք, արդյունաբերական հսկան, որի գործունեությունն արդեն իսկ առնչվում է բազմաթիվ ռիսկերի հետ, դժվարություններ չի կարող չունենալ: Սա բազմաշերտ և ընդգրկուն ոլորտ է՝ հատկապես ռիսկերի կառավարման առումով: Չենց դրանով էլ բարդ, ժամանակատար և ծախսատար է ժամանակակից հանքի շահագործումը: Սակայն կառավարման ճիշտ կազմակերպման դեպքում հնարավոր է ունենալ անխափան, կայուն և համաշխարհային լավագույն չափորոշիչներին համապատասխանող ձեռնարկություն: Մենք հիմա ինչ-որ իմաստով բարեփոխումների փուլ ենք անցնում, որն ամենօրյա ռեժիմով նոր, կարևոր, երբեմն հրատապ որոշումների անհրաժեշտություն է ենթադրում: Մենք տեսնում ենք 70-ամյա հանքի երիտասարդացած ապագան, և տեսնում ենք, որ հանքարդյունաբերության միջազգային փորձի ներդրմանը կարող ենք շատ շուտով հասնել, ինչը, իհարկե, մեծ ծավալի ջանքեր և ժամանակ է պահանջում:

– Կուզենայինք քննարկել նաև բնապահպանական խնդիրները.

...Արդյունաբերական հսկան, որի գործունեությունն արդեն իսկ առնչվում է բազմաթիվ ռիսկերի հետ, դժվարություններ չի կարող չունենալ: Սա բազմաշերտ և ընդգրկուն ոլորտ է՝ հատկապես ռիսկերի կառավարման առումով:

հանքարդյունաբերությունն այդ իմաստով ամենախոցելի և ամենաքննադատվող ոլորտն է:

– Բնապահպանությունը և կայուն զարգացումը հանքարդյունաբերության ոլորտում շատ տարրողունակ թեմա են, և կարելի է մանրամասն ներկայացնել, թե հատկապես ինչ է անում այսօր ԶՊՄԿ-ն՝ բնապահպանական մարտահրավերների առումով: Բայց, եթե ամենակարճ պատասխանը տամ, ապա հայաստանյան օրենսդրությամբ նախատեսված բնապահպանական բոլոր պահանջները մենք կատարում ենք: Եվ այդքանով չենք բավարարվում, այլ հետևում ենք համաշխարհային միտումներին՝

» 05

Տեխնիկական վերազինում՝

ԶՊՄԿ տեխնոլոգիական ավտոպարկում

Ճապոնական արտադրության «Կամացո» մակնիշի նոր հսկաները արդեն ԶՊՄԿ-ի բաց հանքի տարածքում են:

Ճապոնական արտադրության «Կամացո» մակնիշի նոր հսկաները արդեն ԶՊՄԿ-ի բաց հանքի տարածքում են: Մեկ տասնյակից ավելի 95 տոննա բեռնատարողությամբ ինքնաթափերն այստեղ են հասել որոշակի առաջադրանքով՝ առավել արդյունավետ դարձնել աշխատանքը: «Կատերպիլլար»-ի ղեկին սովոր փորձառու վարորդները հերթական երթն են կատարում՝ համեմատելով ամերիկյանը ճապոնականի հետ և ընդգծում են, որ «Կամացոն» շրջա-

դարձերը հեշտ է կատարում: Վերջին անգամ ավտոհավաքակայանը տեխնիկայով համալրվել էր 2015թ-ին: Նորը երկար կծառայի՝ բնակա-նաբար հեշտացնելով աշխատանքը: Բեռնատարների ցանկացած խնդրի դեպքում սպասարկումը կիրականացնեն Կամացոյի մասնագետները՝ հենց հանքի տարածքում: Բեռնատարներից բացի կոմբինատը ձեռք է բերել 40 տոննա տարողությամբ նոր ջրցան-ներ: Մինչ Կամացոն հանքախորշ կհասնի, ջրցանը տարածքը ազատում է փոշուց: Բնապահպանական կանոններին հետևելը կոմբինատի քաղաքականության պար-տադիր բաղադրիչն է: Բաց հանքի տարածքում քսանչորսժամյա աշխատանքը շարունակվում է մեղվի փեթակի կարգուկա-նոնով. յուրաքանչյուրը հստակ գիտի իր անելիքը : Անձնակազմն արդեն հասցրել է ուսումնասիրել նոր տեխնիկան և ոգևորությամբ շահագործում է այն:

Հերմինե Միքայելյան

// Երկրաբանի օր

Հանքարդյունաբերությունը սկսվում է երկրաբանությունից

1966 թվականից սկսած՝ ապրիլի առաջին կիրակին նշվում է որպես երկրաբանի օր:

Հենց այդ մասնագետների ճշգրիտ աշխատանքի արդյունքում են բացահայտվում ընդերքի հարստությունն ու ներուժը՝ հետագա արտադրական պրոցեսների համար հիմք ապահովելով: Գործող մասնագետներից շատերն են փաստում, որ տեսական աշխատանքում գիտելիքները ճիշտ օգտագործելուց և արդյունքները տեսնելուց հետո են հիմնականում բացահայտել սերը երկրաբանության հանդեպ:

«ԶՊՄԿ» ՓԲԸ տեխնիկական տնօրեն Արման Վարդանյանի խոսքով՝ մասնագիտությունը միանգամային հեռանկարային է՝ հաշվի առնելով ՀՀ հարուստ ընդերքը: Սակայն հետաքրքիր է, որ ներկայումս քչերն են կրթություն ստանում այս մասնագիտությամբ: Եթե այդ միտումը շարունակվի, 10 տարի անց, լուրջ խնդիր է առաջացնելու ոլորտի համար: ԶՊՄԿ երկրաբանները ընկերության աշխատանքային կոլեկտիվը երկրորդ ընտանիք են համարում, նրանցից յուրաքանչյուրը հասկանում է, որ գործը դյուրիններից չէ, և համերաշխ մթնոլորտը բարձր արդյունքների ապահովման երաշխիքներից է: Յուրաքանչյուր մասնագիտական տոն նպատակ ունի մեծարելու ոլորտի ներկայացուցիչներին և նրանց կատարած աշխատանքը, և ևս մեկ անգամ հիշեցնելու, որ հանքարդյունաբերությանը սկսվում է երկրաբանությունից:

Անի Գրիգորյան
Ապրիլ, 2023թ.

«Մեզ համար չկան անորոշություններ, և Սյունիքում շարունակում ենք կատարել ներդրումներ»

« 03

բնապահպանական ռիսկերը նվազագույնի հասցնելու առումով: Պետք է ասեմ՝ միշտ չէ, երբ համացանցով կամ որևէ լրատվամիջոցով ներկայացվող խնդիրը համապատասխանում է իրականությանը: Իհարկե, չենք էլ կարող պնդել, թե խնդիրներ չկան, կան, բայց դրանք լուծելի են: Ընդ որում՝ լուծումները, ինչպես արդեն ասացի, մեծ ծախսեր են պահանջում, բայց բնապահպանական հարցերի լուծման համար երբեք ու որևէ գումար չի խնայվում: Շուտով կհայտարարվի մի քանի մեծածավալ ծրագրի մասին, որ այս ուղղությամբ իրականացվում է:

– Ադրբեջանը, փաստորեն, Հայաստանի նկատմամբ բնապահպանական տեռոր է կիրառում՝ պնդելով՝ հայկական հանքերը՝ թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում, շահագործվում են բնապահպանական լուրջ խախտումներով, և ներկայացնում են, թե դա է իրենց կողմից Լաչինի միջանցքը փակելու շարժառիթը:

– Երբ ասում եմ, որ մեր երկրի բնապահպանական խնդիրները միշտ չէ, որ ներկայացվում են գրագետ ու օբյեկտիվ ձևով, հենց դա նկատի ունեմ: Հիմա յուրաքանչյուր կեղծ տեղեկատվություն վերածվում է թշնամու կողմից սադրանքի առիթի: Ստացվում է՝ ինքներս մեր տնտեսության կարևորագույն ոլորտը վարկաբեկում ենք: Մինչդեռ, վստահաբար կարող եմ ասել, հայկական հանքավայրերը հարևանների համեմատ շատ ավելի բարձրակարգ կառավարում ունեն և բնապահպանական շատ ավելի խիստ չափանիշներով են առաջնորդվում: Ոլորտում եղած բոլոր խնդիրները պետք է վեր հանվեն գրագետ և նպատակային՝ եղած հարցերին լավագույն լուծումներ տալու, ոչ թե անհարկի, անտեղյակ և ապատեղեկատվական աղմուկով վնասելու թե՛ երկրի, թե՛ կոնկրետ այս լրջագույն ոլորտի համբավը:

Հարցազրույցը՝ Սամվել Ալեքսանյանի

ԲԱՑԱՀԱՆՔԻ ՀՈՐԱՏՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ //
Իշխան Պետրոսյան,
Վիգեն Ղոնյան,
Կարեն Ծատրյան

Մեր մասնագետները

Բացահանքի հորատման և հետախուզման տեղամասի աշխատակիցների ամենօրյա գործառույթը՝ նախապես որոշված հանքի հորիզոններում հետախուզական և հորատման աշխատանքների իրականացնումն է:

ԶՊՄԿ բացահանքի հորատման և հետախուզման տեղամասի պետ Իշխան Պետրոսյանի խոսքերով՝ տեղամասը հարուստ է ինչպես երկարամյա և փորձառու,այնպես էլ՝ երիտասարդ աշխատակիցներով: Հանդիպեցինք նրանցից երկուսին՝ Վիգեն Ղոնյանին և Կարեն Ծատրյանին:

– **Տեղամասում ունենք 60-ից ավել աշխատակից,** – պատմում է տեղամասի պետը: Բարեխիղճ և պարտաճանաչ աշխատակիցներ են, ժամանակին կատարում են պահանջված աշխատանքը:

– Վիգեն Ղոնյանը երիտասարդ, պատասխանատու օպերատոր է: Հորատման տեղամասում ավելի քան 5 տարի աշխատում է որպես Atlas Copco DM45-ի մեքենավար:

– «Շատ նուրբ և խելացի մեխանիզմ է, – ասում է Վիգեն Ղոնյանը: **– Ճիշտ շահագործման դեպքում երբեք խնդրի առաջ չի կանգնեցնի: 5 տարի հանքավայրում աշխատելը քիչ ժամանակ չէ, յուրաքանչյուր օր՝ հմտություն ու գիտելիք ես ձեռք բերում: Աշխատում եմ օրինակելի կոլեկտիվում, և՛ գործնական և՛ ընկերական հարաբերություններ ունենք գործընկերներիս հետ: Ընդգծեմ նաև, որ ղեկավարությունն անմիջապես արձագանքում է ծագած հարցերին և խնդիրներին, տալիս հստակ լուծումներ»:**

Վիգեն Ղոնյանը հաճախ է օգտվում՝ ընկերության հանգստի սոցիալական փաթեթներից /Ջերմուկ, Դիլիջան/ նա բարձր է գնահատում է այդ հնարավորությունը:

Կարեն Ծատրյանը ընկերությունում աշխատում է 2014 թվականից: Մոտ 6 տարի էլ՝ հորատման տեղամասում որպես մեքենավարի օգնական:

– «Անձնակազմը բաղկացած է 4 հոգուց. 2 մեքենավար և 2 օգնական: Աշխատում ենք 2 հերթափոխով, 12 ժամյա գրաֆիկով: Տարիների ընթացքում միմյանց հարազատ ենք դարձել, աշխատանքային դժվարություններն ու խնդիրները փորձում ենք հնարավորինս արագ լուծել:

Ժամանակակից տեխնիկան շահագործելը դժվար չէ: Միայն հարկավոր է վերաբերել բացառապես խնամքով ու՝ կստանաս հատուցումը:

Այսօր կայուն աշխատանք ունենալը կարևոր գրավական է և մենք հպարտ ենք, որ ընկերության մի մասնիկն ենք կազմում»:

Atlas Copco DM45-DM50	Հորատման տրամագիծը	Հորատման խորությունը	Քաշը
	149-229 մմ	8500-53300 մմ	35000 - 41000 տ

ԿՐԵՔ ՍԱՂԱՎԱՐՏ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

1. Բոլոր աշխատակիցներից, կապալառուներից և այցելուներից պահանջվում է ցանկացած միջավայրում (շինարարական հարթակներ/տեղամասեր, պահեստներ և այլն) կրել գլխի և դեմքի պաշտպանության միջոցներ, եթե մարդու կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում կամ առկա է ցուցող նշան այդ տեղամասի մուտքի մոտ:

2. Օգտագործվող սաղավարտները պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության և միջազգային ստանդարտների պահանջներին:

3. Սաղավարտները պետք է կրել արտադրող ընկերության ցուցումներին համապատասխան:

Աշխատակիցների խմբերը տարբերակելու համար օգտագործվում են 5 գույնի սաղավարտ

ՂԵԿԱՎԱՐՆԵՐ	ՎԵՐԱՀՍԿՈՂ ԱՆՁԻՆՔ	ԲԱՆՎՈՐՆԵՐ	ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

4. Արգելվում է սաղավարտի կարգավորվող միջուկի ցանկացած փոփոխություն:

5. Արգելվում է սաղավարտների մաքրումը այնպիսի լուծույթներով և քիմիական նյութերով, որոնք նախատեսված չեն արտադրող ընկերության կողմից թողարկված ձեռնարկում:

6. Պտտվող սարքավորումների հետ աշխատելիս, հավաքել երկար մազերը մազակալով՝ սաղավարտի տակ:

ՊԱՀՊԱՆԵՔ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հավատարիմ՝ «ԶՐՈ ՎՆԱՍ» սկզբունքին

Հարցազրույց «ԶՊՄԿ» ՓԲԸ աշխատանքի անվտանգության բաժնի ղեկավար՝ Արթուր Աղայանի հետ

– Պ-րն Աղայան, դուք ղեկավարում եք ԶՊՄԿ ՓԲ ընկերության աշխատանքի անվտանգության բաժինը: Ասացեք խնդրեմ, ո՞րն է բաժնի գործառույթը և ինչ մասնագետներ են ներառված:

– Թերևս սկսեմ նրանից, որ ոլորտն անչափ կարևոր է ու արդիական՝ բոլոր ժամանակներում: Աշխատանքի անվտանգությունը յուրաքանչյուրիս պատասխանատվությունն է, իսկ պատասխանատվության շարժիչ ուժը մենք ենք՝ աշխատանքի անվտանգության բաժնի աշխատակիցներս:

Մեր հիմնական նպատակը ընկերության տարբեր օղակներում աշխատող մեր գործընկերների համար անվտանգ աշխատանքային պայմաններ ստեղծելն է:

Առաջնորդվում ենք ՀՀ օրենսդրության, ԻՍՕ 45001 միջազգային չափանիշների պահանջներով: Աշխատավայրում աշխատողների առողջության պահպանումը և անվտանգության ապահովումը ՀՀ աշխատանքային օրենսդրության կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Սակայն, պիտի հավելեմ, որ ստանդարտներից ու օրենքի պահանջներից զատ, կա մարդկային առողջ մտածելակերպ, գիտակցություն և պատասխանատվություն, որը պիտի յուրաքանչյուր անհատին ստիպի ամեն իրավիճակում կիրառել և պահպանել անվտանգութ-

յան կանոնները՝ գնահատելով ամենաթանկը:

Ունենք հմուտ մասնագետներ, ընկերության տարբեր արտադրամասերում աշխատանքային փորձ ունեցող ինժեներներ, դասընթացավարներ, բուժքույրեր: Թվարկածս մասնագետներից յուրաքանչյուրն ամենօրյա ռեժիմով խստագույնս հետևում ու կանոնակարգում է իր ոլորտը:

– Արդյո՞ք հաջողվում է ընկերության արտադրական տարածքում պահպանել հսկողությունն անվտանգության առումներով և արդյոք հեշտ է տրվում աշխատանքը: Ինչպիսի խնդիրներ են հանդիպում հիմնականում:

– Գաղտնիք չէ, որ հանքարդյունաբերությունը մեծ զգոնություն է պահանջում, ստիպում՝ կրկնակի պատասխանատու լինել, հավատարիմ մնալ՝ որդեգրված «Զրո վնաս» սկզբունքին: Չէ՞ որ, ընկերության ամենակարևոր ռեսուրսը, մարդկային կյանքն է: Մարդն է ստեղծել և պահպանել այս ամենը, հասցրել ընկերությունն այս մակարդակին, և այսօր ուղղակի պարտավոր ենք՝ հոգատար լինել մեր մարդկանց՝ աշխատակիցների հանդեպ:

Դա բոլորովին հեշտ չի տրվում: Բախվում ենք տարբեր իրավիճակների, երկարաժամկետ կամ կարճաժամկետ լուծումներ պահանջող հարցերի: Բարեբախտաբար, լուծումները միշտ գտնում ենք, իհարկե, նաև՝ ընկերության արտադրամասերի ղեկավարության հետ սերտ համագործակցության արդյունքում:

– Հրահանգավորում եք հյուրերին և այցելուներին՝ արտադրական տարածքում անհատական պաշտպանիչ միջոցներ կրելու, անվտանգության կանոնները պահպանելու անհրաժեշտության մասին: Ինչպիսի՞ն է լինում արձագանքը:

– Լինելով ՀՀ հանքարդյունաբերության առաջատար՝ պատկերացնում եք իհարկե, որքան հյուրեր, այցելուներ ենք ունենում: Հրահանգավորման գործընթացը պարտադիր է յուրաքանչյուրի համար, ով պատրաստվում է մտնել ընկերության արտադրական տարածք:

ԱՐԹՈՒՐ ԱՂԱՅԱՆ // «ԶՊՄԿ» ՓԲԸ աշխատանքի անվտանգության բաժնի ղեկավար

Եվ հենց այս ընթացքում են նրանց մոտ առաջանում հարցեր, արձագանքները ևս տարբեր են լինում, իսկ դրանց առկայությունը փաստում է, որ դիմացինդ ուշադիր է խոսքերիդ նկատմամբ:

– Վերջերս ընկերության ավտովարորդներին շնորհվել են հավաստագրեր, մանրամասնեք, խնդրեմ:

– Այո, ընկերության արտադրական տարածքում տրանսպորտային միջոցների երթևեկության անվտանգության սպառնալիքների կանխման, դրանց ծանրության և հետևանքների նվազեցման նպատակով իրականացվել են վարորդների, տեխնիկական միջոցներ շահագործող աշխատակիցների որակավորման բարձրացման՝ տեսական և պրակտիկ դասընթացներ: Մասնակիցներին շնորհվել են դասընթացի կազմակերպիչ՝ X-Drive ավտոդպրոցի հավաստագրեր:

Նման միջոցառումների կարևորությունը մեծ է և օգտակար՝ անգամ ամենափորձառու մասնագետների համար:

– Ծրագրեր, միջոցառումներ, ուսումնատակտիկական վարժանքներ:

– Միայն հորդորով չենք կարող կառուցել անհրաժեշտ ու բավարար անվտանգային միջավայր, և ոլորտի արդյունավետ աշխատանքը պահանջում է տարբեր կարգի դասընթացներ, ուսումնատակտիկական վարժանքներ, հրահանգավորումներ: Անգամ կարգապահական տույժերի կիրառումը անվտանգության տեսակետից կարևոր է:

Նշեմ նաև, որ բաժինը դասընթացներ է իրականացնում ընկերության այլ աշխատանքի տեղափոխվող, ինչպես նաև՝ նոր աշխատակիցների հետ: Եռակցողներ, պայթեցնողներ, կռունկավարներ և այլն, պարբերաբար անցնում են որակավորման դասընթացներ: Թվարկումը կարող է երկար լինել, միայն ավելացնեմ, որ ամեն տարի ՀՀ ԱԻՆ Սյունիքի մարզային փրկարարական ծառայությունը ԶՊՄԿ աշխատակիցների հետ ուսումնատակտիկական վարժանքներ է անցկացնում, որոնք բացահայտում են աշխատակիցների ներքին պատրաստվածությունը, արձագանքը՝ արտակարգ իրավիճակներին:

Արդյունքում մեր մասնագետները պատրաստ են և կարող՝ օգտակար լինել անհրաժեշտ դեպքերում:

Եվ վերջում ավելացնեմ, որ մենք բոլորս պետք է հավատարիմ լինենք «Զրո վնաս» սկզբունքին մեր գործունեության բոլոր ոլորտներում և հնարավորինս աշխատենք առանց միջադեպերի:

Լիլիթ Իսրայելյան
Քաջարան, մարտ, 2023 թ.

ԶՊՄԿ-Ն ՆԵՐԴՐՈՒՄ Է ԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ:

Ընկերության տարածքում տրանսպորտային միջոցների երթևեկության անվտանգության, մասնավորապես ճանապարհատրանսպորտային պատահարների նախկանխման, դրանց ծանրության և հետևանքների նվազեցման, աշխատակիցների կյանքի, առողջության և գույքի անվտանգության պահպանման նպատակով իրականացվել են տեխնիկական միջոցներ շահագործող 125 աշխատակիցների որակավորման բարձրացմանն ուղղված տեսական և պրակտիկ դասընթացներ: Մասնակիցները ստացել են համապատասխան հավաստագրեր:

Դասընթացը կազմակերպվել և իրականացվել է X-Drive ավտոդպրոցի և ընկերության անվտանգության բաժնի կողմից:

Մենք բարեգործություն չենք անում, այլ միասին աշխատում ենք յուրաքանչյուրս մեր մասով, ինչը առաջին հերթին հայ ժողովրդի բարեկեցության համար է:

Համագործակցության հուշագիր Զանգեզուրի կոմբինատի և Կապանի համայնքապետարանի միջև

Ապրիլի 6-ին Կապանի մշակույթի կենտրոնում առաջին անգամ Կապանի համայնքապետարանի և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր: Փաստաթուղթը 5-ամյա գործունեության համար է, որտեղ ըստ տարիների նախանշված է գործողությունների պլանը: Կողմերը համագործակցելու են տնտեսական, սոցիալական, քաղաքաշինական, կրթական, մշակութային, մարզական և այլ ոլորտներում:

Հուշագիրը ստորագրեցին «ԶՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին և Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը:

«Հուշագրի ստորագրումը բիզնեսի և համայնքի միջև ճիշտ փոխհարաբերությունների դրսևորում է: Մենք բարեգործություն չենք անում, այլ միասին աշխատում ենք յուրաքանչյուրս մեր մասով, ինչը առաջին հերթին հայ ժողովրդի բարեկեցության համար է: Մեր պարտականություններից է նաև սոցիալական պատասխանատվություն ունենալ այն համայնքների նկատմամբ, որտեղ գործունեություն ենք ծավալում: Մինչ այս էլ աջակցել ենք համայնքին, այսուհետ էլ դրա ծավալները միայն ու միայն կավելանան», – հուշագրի ստորագրման արարողությունից հետո նշեց ԶՊՄԿ ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին:

Համայնքապետ Գևորգ Փարսյանն իր հերթին վստահություն հայտնեց, որ այս իրողությունը ամրագրվելու է համագործակցության պատմության էջերում. «Լիահույս եմ, որ սրանով հիմք ենք դնելու ավելի բարձր մակարդակի համագործակցության: Մենք շատ բարձր ենք գնահատում ԶՊՄԿ-ի կորպորատիվ, սոցիալական պատասխանատվության մակարդակը և այդ շրջանակում բարի կամքի դրսևորումը»:

Միջոցառմանը ներկա էին նաև ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանը, գլխավոր տնօրենի տեղակալ Արթուր Նիկողոսյանը, Կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը:

// Առողջապահություն

Սյունիքում քաղցկեղի ամենաքիչ դեպքերն են արձանագրվել

Առողջապահության ազգային ինստիտուտի՝ վերջերս հրապարակած տվյալները կոտրեցին այն կարծրատիպը, թե իբր հանքարդյունաբերական Սյունիքն ուռուցքների թվով հանրապետությունում առաջատար է:

Խոսում են թվերը.
Եվ այսպես՝ Հայաստանում ամեն 54-րդ մարդն ունի քաղցկեղ: 2021-ին հանրապետությունում գրանցվել է 54519 դեպք: Ընդհանուր դեպքերի թվով առաջատարը, բնականաբար, մայրաքաղաք Երևանն է (22647): Նրան հետևում են Կոտայքը (4689), Լոռին (4628), Շիրակը (4459), Արարատը (4081), Արմավիրը (3792), Գեղարքունիքը (3431), Արագածոտնը (1999), Տավուշը (1931), Սյունիքը (1874), Վայոց ձորը (825):
100 հազար բնակչի հաշվով քաղցկեղի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Լոռու մարզում, ամենացածրը՝ Սյունիքում:
«Միգուցե վիճակագրական տվյալները նոր են հանրության համար հասանելի դարձել, դրա համար ուշադրություն են գրավում, բայց այդ ցուցանիշների միտումը վաղուց էր նկատելի: Վերջին տարիներին միշտ էլ ասել եմ, որ թվում է, թե Սյունիքի մարզում ուռուցքային հիվանդացության ցուցանիշները շատ բարձր են, բայց փաստորեն հակառակն է: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ միջին թվաբանականին մոտ ենք կանգնած, նույնիսկ ավելի ցածր, - նշում է Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Նունե Գևորգյանը և հավելում, - ուռուցքով հիվանդացության դեպքում չհաշվառված բուժառուներ չկան. ինչ-որ փուլում նրանք անպայման գրանցվում են»:
Վարչության պետը նկատում է՝ նվազել է նաև մարզում ուռուցքաբանական հիվանդությունների պատճառով մահացության թիվը, բայց միաժամանակ ավելացել են հաշվառված հիվանդները, ինչը նշանակում է, որ 5 տարվա ապրելիության ցուցանիշը մեզանում անընդհատ աճում է. սա համակցված լավ բուժման արդյունք է:



2021-ին հանրապետությունում գրանցվել է 54,519 դեպք

Քաղցկեղով հիվանդանում են ավելի շատ կանայք
Հայաստանում քաղցկեղ ավելի շատ հանդիպում է կանանց շրջանում՝ 55%, տղամարդկանց շրջանում՝ 45%: Կանանց շրջանում ուռուցքի ամենատարածված տեսակը կրծքագեղձի քաղցկեղն է (52.45%), տղամարդկանցը՝ շնչափողինը, բրոնխներինը, թոքինը (33.03%): Կանանց շրջանում գերակշռում է նաև արգանդի պարանոցի (9.92%), արգանդի մարմնի (9.84%) և հաստ աղու (9.45%), իսկ տղամարդկանց շրջանում՝ միզապարկի (18,3%), շագանակագեղձի (16.56%), հաստ աղու (11.78%), ստամոքսի (11.35%) քաղցկեղը:
Հայաստանյան այս վիճակագրությունը գրեթե նույնական է համաշխարհային տվյալների հետ: Քաղցկեղը բազմագործոնային հիվանդություն է, չկա գիտությանը հայտնի մեկ կոնկրետ պատճառ, որն առանց որևէ այլ գործոնների ազդեցության առաջացնում է ուռուցք, քանի որ խոսքն այստեղ մեկ հիվանդության մասին չէ, այլ մոլեկուլյար գենետիկ մակարդակով իրարից տարբերվող բազմաթիվ հիվանդությունների, որոնց առաջացման մեջ տարբեր՝ արտաքին և ներքին ռիսկի գործոններ կան:
«Արտաքին ռիսկի գործոնները կարող են լինել քիմիական, կենսաբանական, ֆիզիկական, միջավայրի կողմից տարբեր ազդեցություններ, իսկ ներքին գործոնները հիմնականում տարբեր մուտացիաներ են՝ ժառանգական նախատրամադրվածությամբ պայմանավորված, այսինքն՝ այն ամենը, ինչը բջջի կամ գենի մակարդակով է տեղի ունենում ու նպաստում է, որ բջիջը անկառավարելի կիսվի, բազմանա, փոխի ֆունկցիան, ու առաջացնի գոյացություն, որը հետագայում կարող է տարածվել օրգանիզմի այլ հատվածներում ևս», - բացատրում է բժիշկ-ուռուցքաբան Մարինե Ռուշանյանը և ևս մեկ անգամ պնդում, որ միայն մեկ գործոնով չի կարող պայմանավորված լինել ուռուցքի առաջացումը:
Օգտվել պետական սքրինինգային ծրագրերից, թողնել ծխելը, վարել առողջ ապրելակերպ, տարեկան գոնե մեկ անգամ անցնել ուլտրաձայնային հետազոտություն, չնչին ախտանշանի դեպքում անգամ դիմել մասնագետի. քայլերի այս հաջորդականության դեպքում միայն հնարավոր կլինի կանխել կամ վաղ հայտնաբերել ուռուցքը և համոզվել, որ այն դատավճիռ չէ:

Արմինե Հարությունյան

ԱՐԱՅԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ. «Մենք բաց ենք բոլոր լրատվամիջոցների համար և սիրով կաջակցենք ԶՊՄԿ-ի աշխատանքները լուսաբանողներին»

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության առաջատարն է: Չորս հազար վեց հարյուր աշխատակից ունեցող ընկերության գործունեությամբ է պայմանավորված Սյունիքի մարզի և հատկապես Քաջարան ու Կապան համայնքների սոցիալ-տնտեսական ներդաշնակ վիճակը, զարգացման հեռանկարը: Այդ ամենով է բացատրվում այն մեծ ուշադրությունը, որ առկա է հանրության մեջ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի հանդեպ, ինչն էլ պահանջում է ակտիվ շփումներ հասարակության ամենատարբեր խավերի հետ, թափանցիկ գործելակերպ, հանրապետության և հատկապես մարզի համար նշանակություն ունեցող ձեռնարկումների պատշաճ հանրայնացում, առկա կամ ծագող հարցերի վերաբերյալ պարզաբանումների կամ արձագանքների կազմակերպում և այլն: «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գործունեության այդ ոլորտին ծանոթանալու համար զրուցեցինք ընկերության լրատվության և հասարակության հետ կապերի բաժնի պետ Արայիկ Մարգարյանի հետ:

– Ի՞նչ է իրենից ներկայացնում «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության լրատվության և հասարակության հետ կապերի բաժինը. գործառույթներ, խնդիրներ, առաջնահերթություններ, ռեսուրսներ...

– Ինչպես անվանումն է հուշում, բաժինն ամենօրյա ռեժիմով ապահովում է ԶԼՄ-ների և հասարակության հետ կապը, իրական ժամանակում հետևում է սոցցանցերում և մամուլում ընկերությանն առնչվող թեմաներին, անհրաժեշտության դեպքում արձագանքում է դրանց: Վերջին շրջանում մենք դիտարկում ենք նաև ադրբեջանական մամուլը, որտեղ էականորեն աճել են ԶՊՄԿ-ին վերաբերող հոդվածները: Սահմանային Ողջի գետի թեման մեր հարևանները փորձում են օգտագործել էկոլոգիական համատեքստում և միջազգային աղմուկի համար հող նախապատրաստել: Բազմաթիվ են հրապարակումներն այն մասին, որ պատրաստվում են միջազգային դատարան դիմել ու փոխհատուցում պահանջել Հայաստանից: Բացահայտ հայտարարվում է, որ հայցադիմումին կցելու են գետն աղտոտելու մասին հայկական մամուլում տեղ գտած հրապարակումներն ու նույն թեմայով հայկական ՀԿ-ների զեկույցները: Օգտվելով առիթից՝ իմ լրագրող գործընկերներին կոչ եմ անում այս թեմայով հրապարակումներ անելիս ավելի երկար մտածել և իրականության ու փաստերի վրա կառուցել հոդվածները, որպեսզի ակամա չօգնեն թշնամուն: Յուրաքանչյուր շաբաթ ադրբեջանական մամուլում 20-40 անգամ հիշատակվում է ընկերության անվանումը: Մեր բաժինը նաև մշակում է ընկերության կարճաժամկետ և երկարաժամկետ մեդիառազմավարությունը, լուսաբանում իրականացված սոցիալական ծրագրերը, կարևոր իրադարձությունները:

– Զանգեզուրի կոմբինատի գործունեությունը, խոստովանենք, հատկապես 2014-20 թթ., թափանցիկության առումով խոցելի է եղել: Փորձեք լույս սփռել հարցի վրա՝ ընկերության ղեկավարությունն ինչպե՞ս է պատկերացնում թափանցիկություն ասվածը:

– Անկեղծ ասած, ես չեմ հետևել, թե մինչև 2020 թվականն ինչ քաղաքականություն է վարել ընկերությունը թափանցիկության առումով: Իմ առջև խնդիր է դրված աշխատել թափանցիկ ու ընկերության գործունեությունը մատչելի դարձնել հասարակության բոլոր խավերին: Հանրությունը շատ քիչ բան գիտի մեր սոցիալական ծրագրերի մասին, պատկերացում չունի, թե ընդհանրապես ինչով է զբաղվում ընկերությունը: Հիմա մենք քննարկում ենք զբոսաշրջիկներին կամ հետաքրքրված մարդկանց խմբերին բացահանք և հարստացուցիչ ֆաբրիկա հրավիրելու հարցը:

Առաջարկելու ենք շրջայց կատարել ու մոտիկից տեսնել ու զգալ լեռնագործների, հանքագործների աշխատանքը: Ուզում ենք, որ լրատվամիջոցներն ընկերության մասին տեղեկատվությունը կարողանան անմիջապես ընկերությունից ստանալ:

– Պարբերաբար, գրեթե ամեն շաբաթ, լրատվական դաշտում հրապարակումների ենք հանդիպում՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինին առնչվող: Ընդ որում՝ և դրական, և բացասական շեշտադրումներով կամ ուղղվածությամբ:

Բացասական հրապարակումները (մեղմ ասած) երբեմն սուբյեկտիվ ընկալումների կամ անտեղյակության կամ նույնիսկ դիտավորության արդյունք են լինում:

Ինչպե՞ս եք վերաբերում քննադատական հոդվածներին: Անանուն կամ կեղծ ստորագրությամբ հրապարակումներին իրեն հարգող որևէ մեկը չի արձագանքի, ուստի և այդ կարգի հորինվածքներին չենք անդրադառնում: Իսկ մյուս դեպքերում... Ի՞նչ գործելակերպ եք որդեգրել՝ արձագանքե՞լ, հերքե՞լ, հակառա՞կն ապացուցել, թե՞ լռելյայն հետևել:

– Ապատեղեկատվության, ստի ու մանիպուլյատիվ հրապարակումների դեպքում Դուք նկարագրեցիք մեր գործողությունների ամբողջական փաթեթը՝ որոշ դեպքերում մենք անտեսում ենք, որոշ դեպքում՝ արձագանքում, իսկ երբեմն էլ հերքում ենք տարածում: Այնպիսի հոդվածները, որտեղ փաստեր կան, մենք վերլուծում ենք ու հետևություններ անում: Գրություններ ենք ուղարկում համապատասխան բաժիններ և ներկայացնում հոդվածում տեղ գտած բացթողումների մասին հիշատակումները: Ցավոք, այդպիսի դեպքերը շատ չեն: Մենք հատկապես գնահատում ենք որակյալ հոդվածները: Դրանք մեզ իսկապես ստիպում են ավելի լավ աշխատել, իսկ բամբասանքներն ու ասեկոսեները մեզ հիասթափեցնում են, որովհետև, ինչպես արդեն նշեցի, ադրբեջանական քարոզչամեքենան դրանք կարող է օգտագործել ընկերության ու Հայաստանի դեմ:

– Ընկերության բարեգործական հիմնադրամին է պատկանում «Սյունիք» մարզային հեռուստաընկերության օգտագործման արտոնագիրը, որը, ի դեպ, բավականին պատասխանատու հանգամանք է:

Տվյալ հաճախականությամբ աշխատող մարզային հեռուստաընկերությունները, ըստ գործող օրենքի, տվյալ մարզի բնակչության հետաքրքրությունները (լրատվական դաշտում) բավարարելու բացառիկ առաքելություն ունեն:

Արդյո՞ք «Սյունիք»-ը հաջողում է պատշաճ ձևով իրականացնել իր այդ առաքելությունը:

– «Սյունիք» հեռուստաընկերությունն այս օրերին վերագինվում է: Այս պահին գույքագրվում են ընկերության տեխնիկատնտեսական կարիքները: Թարմացվում է լիցենզիոն պարտավորություններից բխող հաղորդաշարերի, նախագծերի պատրաստման համար անհրաժեշտ մասնագետների ցանկը: Այս վերջինը լուրջ խնդիր է, ու մարզում դժվարությամբ ենք կարողանում գտնել մասնագետներ: Մենք պլանավորում ենք ներգրավել երիտասարդների, ովքեր դասընթացների ու պրակտիկայի շնորհիվ մասնագետներ կդառնան և կաշխատեն «Սյունիք» ՀԸ-ում: Իսկ ինչ վերաբերում է ընկերության այս պահի գործունեությանը, ապա պետք է գոհունակությամբ նշեմ, որ այն արտադրանքը, որը մեր ուժերով ենք ստեղծում, ամբողջությամբ կամ հիմնականում միտված է սյունեցու հետաքրքրությունները բավարարելուն: Այն, ինչ չենք կարողանում անել հեռուստատեսությամբ, փորձում ենք լրացնել syunik.tv կայքով, որը լիարժեք լրատվական ռեսուրս է ու հիմնականում անդրադառնում է մարզի առօրյային:

> ***Ինչ վերաբերում է ընկերության այս պահի գործունեությանը, ապա պետք է գոհունակությամբ նշեմ, որ այն արտադրանքը, որը մեր ուժերով ենք ստեղծում, ամբողջությամբ կամ հիմնականում միտված է սյունեցու հետաքրքրությունները բավարարելուն:***

– Լրացել է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության հիմնադրման 70-ամյակը: Լրատվական դաշտում ինչպե՞ս եք պատրաստվում նշել հոբելյանը, մանավանդ որ խոսքը ոչ միայն կոմբինատի ներկայի, այլև անցած փառավոր ճանապարհի, հանքագործների մի քանի սերնդի գործունեության մասին է: Կարծում ենք՝ արժեր օգտվելով հոբելյանի առիթից, ի մի բերել և ընթերցողին ներկայացնել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին նվիրված գրքերի, թերթային հատուկ թողարկումների, հեռուստատեսային հատուկ թողարկումների մատենագիտական ցանկը. դա իսկապես հետաքրքիր ձեռնարկում կլիներ: Որքան տեղյակ ենք, տասնամյակների ընթացքում կոմբինատի մասին բազմաթիվ հետաքրքիր ու բովանդակալից, առայսօր անգերազանցելի, գրքեր, հանդեսներ և թերթային համարներ են հրատարակվել, որոնց էջերում պարփակված են կոմբինատի փառավոր ուղու մասին վկայություններ, վավերագրեր... Ձեր կարծիքը...

– Տարբեր միջոցառումներ, այդ թվում տեղեկատվական նյութերի տպագրություն ծրագրվում են և այժմ ընթացքի մեջ են: Բայց ես ուզում եմ ընդգծել, որ մենք բաց ենք բոլոր լրատվամիջոցների համար, անկախ հոբելյանից, և սիրով կաջակցենք կոմբինատի աշխատանքները լուսաբանողներին:

> ***Օգտվելով առիթից՝ իմ լրագրող գործընկերներին կոչ եմ անում այս թեմայով հրապարակումներ անելիս ավելի երկար մտածել և իրականության ու փաստերի վրա կառուցել հոդվածները, որպեսզի ակամա չօգնեն թշնամուն:***

Հարցազրույցը՝
Վահրամ Օրբելյանի

Կոմբինատի երախտավորները՝ Հակոբյանների գերդաստան

Հատված՝ Սոս Դավթյանի «Հանքաշխարհի լեգենդը» տպագրվող գրքից

Բնագավառի և ձեռնարկության պատմության մեջ նկատելի հետք է թողել նաև Հակոբյանների գերդաստանը: Այն սերում է տարածաշրջանի հինավուրց Վերին Հանդ գյուղից: Տվել է լեռնահանքային արդյունաբերության հեղինակավոր մի շարք մասնագետներ, արտադրության ղեկավարներ..., նաև՝ շարքային աշխատողներ: Հակոբյան եղբայրներից ավագը՝ ճանաչված լեռնագործ, հարստացուցիչ ֆաբրիկայի կամրջակային կռունկի անվանի մեքենավար Էդիկ Հակոբյանն է: 1954 թվականի որպես հանքափոր-քարմաղավար աշխատանքի է ընդունվել Քաջարանի կոմբինատի լեռնային արտադրամասում: Ապա զորակոչվել է խորհրդային բանակ, զորացրվելուց հետո վերադարձել է կոմբինատ և աշխատանքի անցել արդեն հարստացուցիչ ֆաբրիկայում որպես սնուցիչավար, իսկ հետո՝ աշխատել պղնձի խտանյութի թանձրացման տեղամասում որպես ֆիլտրող բանվոր: ...Շուտով տիրապետեց նոր՝ կամրջակային կռունկավարի մասնագիտությանը: ...Արժանացել է մեդալների, պատվոգրերի, խրախուսանքների, վաստակել գործընկերների հարգանքն ու պատիվը: Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության վերջին տասնամյակների մի շարք էական նվաճումներ անմիջականորեն կապված են նաև «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության երկարամյա գլխավոր տնօրեն, համբավաշատ լեռնագործ Մաքսիմ Հակոբյանի անվան հետ: Ընդհանուր առմամբ կոմբինատում աշխատելով ավելի քան չորս տասնամյակ, որից համարյա կեսը՝ շուրջ քսան տարին որպես գլխավոր ինժեներ ու տնօրեն, նրան հաջողվեց ճիշտ նախանշել ձեռնարկության զարգացման ուղիները, համախմբել մարդկանց, բազմահազարանոց կոլեկտիվի ջանքերն ուղղել առաջնահերթ ու կարևորագույն խնդիրների լուծմանը, արդյունավետ օգտագործել ժամանակակից տեխնոլոգիական հնարավորությունները: ...Մաքսիմ Հակոբյանի պաշտոնավարումը համընկավ հետխորհրդային առաջին տասնամյակի վերջերին, երկու դարերի անցումային ժամանակահատվածին, կոմբինատի հետմասնավորեցման տասնամյա փուլին, երբ ճիշտ կողմնորոշվելու, և ձեռնարկությունն անսխալ առաջնորդելու անհրաժեշտություն կար: 2004 թվականին նաև կոմբինատի գլխավոր տնօրենի գործուն մասնակցությամբ ընդունվեց տվյալ ժամանակաշրջանի համար հավանաբար միակ արդյունավետ՝ մասնավորեցման մասին որոշումը: Իսկ այն, ինչ ձեռնարկությունում կատարվեց հետսեփականաշնորհման առաջին տասնամյակի

ԷԴԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ, հարստացուցիչ ֆաբրիկայի կամրջակային կռունկի անվանի կռունկավար

ՀԱԿՈԲՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ, հոկտեմբեր 2004թ.

ընթացքում, ուղղակի արտադրատեխնիկական հրաշք կարելի է անվանել: Հանքարդյունաբերության նվիրյալը պատշաճորեն գնահատվեց հայրենի պետության ու ժողովրդի կողմից, արժանացավ բազմաթիվ շքանշանների ու մեդալների, Քաջարան, Կապան, Ագարակ, Մեղրի քաղաքների, Արմավիրի մարզի պատվավոր քաղաքացու կոչման, վաստակեց մինչ այժմ պահպանվող անսահման երախտագիտություն, մեծագույն և համընդհանուր հարգանք:

– Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, որտեղ աշխատել եմ գրեթե 45 տարի և որի հետ կապված եմ իմ ամբողջ աշխատանքային գործունեությամբ, –պատմում է կոմբինատի ֆինբաժնի բազմամյա պետ, Քաջարանի պատվավոր քաղաքացի Մեծլում Հակոբյանը, – **գտնվել է Խորհրդային Միության խոշորագույն մետալուրգիական ձեռնարկությունների ավանգարդում:**

– Խորհրդային երկրի պատմության հատկապես վերջին տասնամյակում կոմբինատի նշանակությունը շատ մեծ էր: Այն երկրի գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների շարքում համարվում էր 100 խոշորագույններից մեկը, որի աշխատանքային օրվա արտադրական ցուցանիշները տնտեսագիտական բաժնում, որի ղեկավարը շուրջ տասնհինգ տարի ես էի, ամփոփվելուց հետո հեռատիպով հաղորդվում էին ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստրություն, որի կողմից տրվում էր համապատասխան գնահատական:

...Ուրախ եմ, որ աշխատանքային գործունեությունս լիովին կապված է նման հզոր ձեռնարկության հետ, որը շարունակում է պահպանել համաշխարհային համբավը և առաջատար դիրքը՝ Հայաստանի Հանրապետությունում: Ձեռնարկության կոլեկտիվում պատշաճ հեղինակություն էին վայելում նաև տարբեր ստորաբաժանումներում աշխատող Հակոբյանների գերդաստանի մյուս անդամները: Կոմբինատի հանքաքարի ջարդման ու տեղափոխման արտադրամասի պետն էր Մարտուն Հակոբյանը, ով հետագայում նշանակվեց Կապանի լեռնահարստացման կոմբինատի տնօրեն, երկար տարիներ լեռնային արտադրամասի պետն էր Հակոբ Հակոբյանը, արտադրական բաժինը ղեկավարեց Հակոբյան եղբայրներից կրտսերը՝ Հայկ Հակոբյանը...

2023թ. ապրիլ

// Գիտություն

Քանի դեռ պղինձը մեզ հետ է՝ կարող ենք հանգիստ լինել

Աշխարհին վաղուց հայտնի են պղնձի ու պղնձածուլվածքների մանրէասպան և ինքնամաքրման հատկությունները: Մարդկությունը հազարավոր տարիներ առաջ բացահայտել, իսկ ժամանակակից հետազոտությունները հավաստել են՝ պղինձը իսկապես ոչնչացնում է մանրէներն ու բացիլները: Առաջին անգամ պղնձի բժշկական հատկությունները հիշատակվել են մ.թ.ա. 2600 և 2200 թթ., ամենահին գրքերից մեկում՝ Սմիթի պապիրուսում:

1852 թվականին Փարիզի շրջաններից մեկում գտնվող պղնձաձուլարանում բարձր ջերմության և քիմիկատների միջոցով կարմրակապտավուն մետաղ էին կորզում: Աշխատանքը վտանգավոր էր, քանի որ չկային աշխատակիցների համար ամենատարրական պայմանները: Եվ ահա այստեղ է այցելում բժիշկ Վիկտոր Բուրքը, որին հետաքրքրել էր, թե պղնձաձուլարանի 200 աշխատակիցներին ինչպես է հաջողվել խուսափել 1832 և 1849 թվականներին Փարիզում բռնկված խոլերայի վարակից: Բուրքը տեղեկացավ նաև, որ նույն փողոցի շուրջ 500 պղնձագործ ևս չեն հիվանդացել, և հանգեց մի կարևոր եզրակացության՝ պղինձը օժտված է հրաշալի հատկությամբ՝ այն ինչ-որ կերպ ոչնչացնում է վիրուսները, համաճարակների հարուցիչները: Բուրքը շարունակեց իր հետազոտությունները՝ այցելելով 400 տարբեր գործարաններ և հավաքագրելով 200.000 մարդու տվյալներ՝ տարբեր երկրներից: 1867 թվականին Ֆրանսիայի գիտությունների և բժշկության ակադեմիային պրոֆեսորը ներկայացրեց իր վերջնական եզրակացությունները: Դրանք մասնավորապես հետևյալն էին. «**Պղինձը և դրա համաձուլվածքներ բրոնզը և արույրը, խոլերայի համաճարակի ժամանակ արդյունավետ կանխարգելիչ դեր են ունեցել»:**

19-րդ դարում պղինձը կիրառվում էր մարդկանց ձեռքերն արագ ախտահանելու համար, պղնձապատվում էին տարբեր մակերևույթներ: Այն կարող է ոչնչացնել մարդուն վնասող մի շարք մանրէներ, այդ թվում՝ ոսկեգույն ստաֆիլոկոկը,կորոնավիրուսները և ամենայն հավանականությամբ՝ COVID-19 պանդեմիայի պատճառ դարձած հարուցիչը:

ՊՂԻՆՁ // *քիմիական տարր է, նշանակումը՝ Cu (լատ.՝ cuprum - կուպրում), տարրերի պարբերական համակարգի 4-րդ պարբերության 1-ին խմբի տարր: Կարգահամարը՝ 29, ատոմական զանգվածը՝ 63,546: d տարր է, ատոմի էլեկտրոնային թաղանթների կառուցվածքն է 4s1: K, L և M թաղանթները լրացված են:*
Բնական պղինձը բաղկացած է երկու կայուն իզոտոպից՝ 63Cu (69,1%) և 65Cu (30,9%): Ստացվել են 58-69 զանգվածի թվով 10 ռադիոակտիվ իզոտոպներ, որոնցից ամենակայունը 67Cu-ն է (T1/2 = 58,5 ժամ):

«... Այն ինչ պատահել է, մեր ամբարտավանության պատճառով է,...հեռացրել ենք մեզ պղնձե սպասքից, ցանկապատներից, պղնձե բռնակներից և փոխարենը ընտրել պողպատն ու այլումինը, – ասել է Հարավային Կարոլինայի բժշկական համալսարանի պրոֆեսոր Միքայել Շմիթը»: Վնասակար շատ մանրէներ կարող են կոշտ մակերևույթների վրա ապրել 4-5 օր, իսկ պղնձի վրա դրանք մահանում են՝ իոնների հետ շփվելիս: Այս մետաղը մանրէասպան է. պրոֆեսոր Շմիթն ասում է. «**Պղինձը 24 ժամ անընդմեջ աշխատում է, այն առանց մարդու միջամտության երբեք չի վերջանում, և քանի դեռ մետաղը մեզ հետ է, կարող ենք հանգիստ լինել»:**

Նվերներ՝ Ծավի փոքրիկներին

Հայտնի խոսք է, որ քաղաքը գյուղով է կանգուն, իսկ գյուղն էլ՝ կրթօջախով: ԶՊՄԿ-ն շարունակում է ուշադրության կենտրոնում պահել մարզի կրթական ոլորտը՝ այս անգամ այց կազմակերպելով սահմանամերձ Ծավի մանկապարտեզ, իհարկե՝ ոչ դատարկաձեռն: Սաների անհատական ընծաներից բացի՝ մանկապարտեզին հանձնվեցին ընդհանուր օգտագործման դիդակտեսողական պարագաներ և զարգացնող խաղեր, որոնք կապահովեն առօրյա ուսումնական գործընթացի բազմազանությունը: «Հյուրեր հաճախ չենք ունենում, այն էլ՝ նվերների նման առատությամբ: Բոլորն էլ կիրառելի են երեխաների ժամանցը և ուսումնական պարապմունքները հագեցած կազմակերպելու տեսանկյունից», – ասում է մանկապարտեզի տնօրեն Մարո Թեյմուրազյանը: Ուշադրությունից շոյված էին նաև գյուղի բնակիչները, աշխատակիցները, ասում են՝ հաճելի է, որ իրենց չեն մոռանում, և որ նվիրումով աշխատելը հարգվում և գնահատվում է: Նման այցելությունները շարունակական բնույթ են կրում, դպրոց-մանկապարտեզների հոգսերը կշարունակեն ուշադրության կենտրոնում պահել ԶՊՄԿ-ի ներկայացուցիչները:

Անի Գրիգորյան, մարտ, 2023թ.

// Մարզական

Մեր աշխատակիցները և մարզվում են, և մրցում

ԶՊՄԿ-ում ամենամյա ավանդական մարզական միջոցառումների մեկնարկը տրված է, արդեն հայտնի է վոլեյբոլի միջարտադրամասային մրցումների հաղթող թիմը: Մարզահամալիրի վարիչ Պուշկին Թևանյանի խոսքով՝ վերջին տարիներին վոլեյբոլի հանդեպ հետաքրքրությունը պակասել է, ուստի կարելի է ասել, որ պատվո պատվանդանին կանգնելու համար պայքարել են տարիների փորձ ունեցող թիմերը:

Թեժ պայքարի արդյունքում ԶՊՄԿ ուժեղագույն ճանաչվեց անվտանգության դեպարտամենտի վոլեյբոլի թիմը, որը հաղթեց հանքաքարի ջարդման և տեղափոխման արտադրամասի թիմին, իսկ 3-րդ պատվավորը տեղը զբաղեցրեց փոխադրամիջոցների վերանորոգման բաժնի թիմը: Նրանք պարգևատրվեցին գավաթներով, մեդալներով, պատվոգրերով և դրամական խրախուսումով:

Առաջիկայում իրենց ուժերը կչափեն նաև բասկետբոլի թիմերը, ապա պայքարի մեջ կմտնեն շախմատիստները:

Անի Գրիգորյան